

Գորգիասի գլխաւոր երկերն են.- «Ոչ-Գոյի մասին» (Peri tou mê óntos) եւ «Բնութեան մասին» (Peri phýseôs):

Գորգիասի նշանաւոր խօսքերէն է.- *«Ոչինչ գոյութիւն ունի. իսկ եթէ բան մը գոյութիւն ալ ունենար՝ ապա ան անճանաչելի պիտի ըլլար. իսկ եթէ բան մը ճանաչելի ալ ըլլար՝ ապա ան անարտայայտելի պիտի ըլլար»*: Բազմաթիւ ու բոլորովին տարբեր մեկնութիւններու արժանա-ցած այս խօսքը, քաղուած է վերոյիշեալ «Ոչ-Գոյի մասին» երկէն, ուր կը տեսնենք ծայրայեղ կասկածապաշտ (Scepticism) փիլիսոփայ մը, որ կը հասնի ոչնչապաշտութեան (Nihilism):

Պլատոնի երկերէն մէկը կը կոչուի «Գորգիաս», ուր նաեւ երկխօսութիւն մը կը ծաւալի Սոկրատեսի եւ Գորգիասի միջեւ, գլխաւորաբար հռետորութեան առնչուած:



Նախասոկրատեան բարոյագիտութիւնը

Նախասոկրատեան ժամանակաշրջանի փիլիսոփաները *առասպելներ*⁽⁸⁾ կը բաժնէին գլխաւոր երկու, բովանդակութեան առնչուած մասերու.- նախ եւ առաջ՝ *տիեզերածնութեան* (Cosmogony) եւ *բնափիլիսոփայութեան* մասն է, ապա՝ *բարոյականութեան* (Morality) մասը: Առասպելաբանութեան աշխարհին մէջ, թէ՛ աստուածները եւ թէ՛ մարդիկ իրենց յատուկ դերերը ունին: Օրինակ Զեւս (յուն.՝ Ζεύς) գլխաւոր աստուածը, միաժամանակ պատասխանատու էր երկնքի, որոտումի, կայծակի, անձրեւի, ինչպէս նաեւ բարոյականութեան: Իսկ մարդոց իրավիճակը այնքան ալ հեշտ չէր, որովհետեւ անոնք կը բնակէին աշխարհի մը մէջ, որ կը տնօրինուէր բազմաթիւ աստուածներու միջոցով. աստուածներ, որոնք կրնային խստօրէն բարկանալ ու մարդոց համար պատիժներ սահմանել:

Նախասոկրատեան ժամանակաշրջանի փիլիսոփաներէն բարոյագիտութեան մասին անդրադարձած են՝ Պիլթագորասը, Դեմոկրիտոսը եւ ընդհանրապէս՝ սոփիստները:

➤ Պիլթագորաս

Պիլթագորաս Սամոսցի (Pythagoras of Samos, 570 – 500 մ.թ.ա.), ծնած է յունական Սամոս կղզիի վրայ: Քաղաքական պատճառով, ան ստիպողաբար լքած է իր ծննդավայրը եւ շրջան մը թափառելէ ետք հաստատուած է Հարաւային-Իտալիոյ յունական Կրոտոն (Croton) քաղաքը: Ան հիմնադիրն է՝

(8) **Առասպելը** (յուն. եւ գերմ.՝ Mythos, լատ.՝ mythus, անգլ.՝ Myth), ժողովրդական աւանդական բանահիւսութիւն կամ հեքիաթանման-այլաբանական պատմում մըն է, որու գլխաւոր հերոսները աստուածներն ու գերբնական մարդիկն են: Առասպելներու նիւթը, հնադարեան այդ ժողովուրդներու (յոյն, հռոմեացի, հայ, եւայլ...) կեանքն է, ներկայացուած չափազանցուած ձեւով: